ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 174-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ.հունիսի 7-ի N 49-Ա որոշումը՝
Որոշում եմ.

1. 2022 թվականի օգոստոսի 3-ին հայտարարել Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան համայնք, գ.Մարց, խոզալանների հանդամաս թիվ 1 հասցեում գտնվող 06-071-0110-0102 ծածկագրի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլարտադրական նշանակության 0.068 հա մակերեսով հողատեսքի և հողատեսքի վրա կառուցված 646.4քմ մակերեսով գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության կիսաքանդ շինության աճուրդ- վաճառք: Գույքի աճուրդի մեկնարկային գինը սահմանել 2500000 ՀՀ դրամ:

2.Համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի և այլ հիմնական միջոցների աճուրդային կարգով օտարող հանձնաժողովին հանձնարարել նախատեսվող աճուրդի վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022 թ. հունիսի 30
ք.Թումանյան